

947.925
U-37

31 1110 2007

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Խ Գ Ժ


Հ Ա Յ Բ Դ Ե Ա Շ Խ Ք



Վ Ի Ե Ն Ե Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1903.



Հ Ա Յ Բ Գ Ե Ա Շ Խ Ժ

05 SEP 2011

ՀԱՅ ԲԴԵԱՇԽՔ

ՔՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԴՐ. Յ. ՄԱՐԿԱՐՏԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. ԹՈՎՄԱՍԿԷՏԻԿԵԱՆ

ՄԽԻԹ. ՈՒԽՏԷՆ



ՎԻՆՆԵԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1903.

Ա Ջ Դ

Խուզարկու-քննադատ մտաց համար՝ շատ հետաքրքրական, եւ հայկական պատմութեան ու քանասիրութեան նկատմամբ ալ՝ արտաքոյ կարգի ընտիր ու կարեւոր գրուածք մը հրատարակեց Դր. Մարկարտ 1901ին՝ յաջորդ անուամբ եւ անուան համագոր բովանդակութեամբ. «Պարսից աշխարհ, ըստ Ստոյն-Մովսէսի Խորենացոյ Աշխարհագրութեան, հանդերձ պատմական-քննադատական մեկնութեամբ եւ պատմական ու տեղագրական յաւելուածներով», որուն վրայ խօսուած է ժամանակին «Հանդէս Ամսօրեայ» ուսումնասիրութիւն մէջ¹:

Այս գիտնական մեծ հմտութեամբ գրուած սքանչելի երկին մէջ՝ գործքէն բոլորովին անկախ՝ զատ զլուխ մը, առանձին ծառ մը կայ՝ Die armenischen Markgrafen վերնագրով, որ գործքին 165–179 մեծադիւր էջերը կը գրաւէ, բոլորովին նոր նիւթ մը: Դր. Մարկարտ այս՝ իւր թէեւ համառօտ, ըսյց շահեկան ուսումնասիրութեամբը՝ հայկական պատմութեան գրեթէ ընդ քողով ծածկուած մէկ անյայտ խորքը կը պեղէ, ի յայտ բերելով Հայ րդեաշիններուն ծագումն, անոնց դիրքն ու վիճակը եւն: Մենք պատշաճ դատեցինք այս կտորը լիակատար թարգմանութեամբ նախ «Հանդէս

¹ *Eränshahr nach der Geographie des Ps. Moses Chorenaci. Mit historisch-kritischem Comentar und historischen und topographischen Exeursen von Dr. J. Marquart, Privatdozenten der alten Geschichte in Tübingen. Berlin, Weidmann. 1901, p. 358 4^o [Abhdlgn. d. K. Ges. d. Wiss. zu Göttingen. Phil.-hist. Kl. N. F. Band III. 2.]*

² *Հանդէս Ամսօրեայ, 1902, թ. 12, էջ 405–8:*

Ամսօրեայի», մէջ մեր ընթերցողներուն ծանօթացընել եւ ապա առանձին ալ ի լոյս հանել: Հարկ չկայ ըսելու թէ Թարգմանութիւնս ամբողջական է եւ անփոփոխ. ի բաց առեալ պատշաճ տեսնուած քանի մ'աննշան տողերու կրճատումս կամ յաւելումը: Կ.

1 Հմմտ. Հանդ. Ամս. 1903, թ. 1, էջ 1-5, թ. 4, էջ 114-119: — «Հանդէս Ամսօրեայի», ընթերցողներուն անծանօթ մը չէ Դր. Մարկարտ. հմմտ. «Հանդէս», 1896, էջ 346-7: — Փուստոս քիւզանդացի (Հանդ. Ամս. 1897. էջ 5-9, 183-86): — Հազարապետը (Հանդ. 1898, էջ 316-320 եւն):



Հ Ա Յ Բ Ռ Ե Ա Շ Խ Ք

Հայ բղետաշիններուն հուժեան եւ բռնած գրից վրայ այնչափ անճիշդ բաներ գրուած են, որ առիթս կը գործածեմ՝ կարելի եղածին չափ համառօտ, անգամ մը խնդիրը ճիշդ մեկնել: — Ագաթանգեղոս էջ 650, 12 եւն (Լանգլուա՝ Ա. 187. Լազարդ էջ 83, 91 եւն.) Ս. Գրիգոր Լուսաւորչէն, անոր Ռստակէս որդիէն եւ Աղբիանոսէն վերջը՝ Տրդատ Թագաւորին հետ կայսեր գացող մեծամեծներուն մէջ կը դասէ « զչորեսին գահերէցսն, որ բղետաշխըն կոչին՝

Զառաջին սահմանակալն՝ Ի Նոր Շիրական կողմանէն,

Երկրորդ սահմանակալն՝ յԱսորեստանեաց կողմանէն,

Երրորդն՝ յԱրուեստական կողմանէն,

Չորրորդն՝ Ի Մաքթաց կողմանէն: »

Ապա կը յաջորդեն՝

5. զմեծ իշխանն Անգեղ տան եւ

6. զԹագադիր ասպետն եւ

7. զսպարապետն մեծ, եւն:

Արուեստական գրչի մը մեկնութիւնն է, որուն միտքն է ինկեր Հայերէն «արուեստական», բառը: Ուստի պէտք է Արուաստան կարգալ, այսինքն՝ Մծբնայ կողմերը: Բացատրութեան եղանակէն կը հետեւի, որ այս իշխաններն ո՛չ թէ այն երկիրներուն մէջ, այլ այն երկիրներուն մօտերը կամ սահմաններուն վրայ կ'իշխէին:

Ուրիշ տեղ մը՝ (էջ 596, 21 եւն. Լանգլուա Ա. 170. Լազարդ էջ 68, 44 եւն,) այն դասականները կը յիշուին, որոնք Սուրբ Գրիգորի ուղեկից եղան, երբ կեսարիա ձեռնադրուելու կ'երթար: Հոս դասակարգութիւնն ուրիշ տեսակ է, եւ կ'երեւայ թէ չորս սահմանակալները հոս կը պակսին.

“Առաջին իշխանն Անգեղ տան,

Երկրորդ իշխանն Աղձնեաց՝ որ քղեաշխն մեծ՝,

Երրորդ իշխանն մարդպետութեան² իշխանութեանն,

1 Յուն. ὁ τῆς κομιτατησίας.

2 Յուն. ὁ τρίτος ἄρχων ἐπὶ τῆς ἐξουσίας πατρίκιος λεγόμενος. Հոս մարդպետին համազօրը կը պակսի. πατρίκιος կը համապատասխանէ մարդպետին հայր տիպոսին առ Փաւստ. Բիւլ. : Ուրեմն կարգալու է ἐπὶ τῆς (εὐνοουχικῆς կամ κουβικλαρικῆς) ἐξουσίας π. λ. — Երրորդ իշխանն մարդպետութեան իշխանութեան, (որո՞ւմ հայր խլիքին): Հմմտ. Փաւստոս Գ. թե. էջ 45, թե. էջ 46 եւն: Լազարդ էջ 144 յունիկն πατρίκιοςը նկատողութեան չ'առնուր եւ կ'երեւայ թէ զայն Ամիանասի vitaxa = βιτάξηςին հետ կ'ուզէ բռնազրօսութեամբ նոյնացնել: Բայց զարմանալի կերպով միտ

Չորրորդ իշխանն թագակապ՝ իշխանութեանն ասպետութեան,

Հինգերորդ իշխանն սպարապետութեան՝ զօրավար Հայոց աշխարհին,

Վեցերորդ իշխանն Կորդովտաց՝ աշխարհին,

Եօթներորդ իշխանն Ծովիաց՝ աշխարհին,

Ութերորդ իշխանն Գարգարացւոց աշխարհին, որ միւս անուանեալ ըղեսաշին՝ եւն:

Անգեղ - տան իշխանին պաշտօնն էր Անգղ գղեակին եւ մէկալ թագաւորական գղեակներուն գանձերը՝ որոնք Անգղ եւ Ծովիք կը գըտ-

չի դներ՝ որ յուն. բնագրին մէջ κομιτατησίας եւ κομιτατήσιος, իսկ Հայերէնին մէջ քրեւի երկու անգամ ճիշդ համապատասխանող տեղը կը դանուին, եւ տարօրինակ կերպով կը դնէ κομιτατησίας = Ժարդդիդ--իւն: - Չեռագրաց Կομητωνին տեղը՝ որ Հայերէն բնագրին Մոկոց բառին կը հապատասխանէ եւ ըստ այսմ *Μωκιτων* ուղղուելու է, Լագարդ բնագրին մէջ κομίτων կը գրէ, բայց անոր տեղ էջ 144 մեր Բիւզանդացւոյն վիզը կ'ուզէ փաթթել Հեկատեսի *Μυκων* (Հմմտ. Ges. Abh. 160), որ հաւանականագոյնս Մոզան անապատն է:

1 Կորդովտոց = յուն. Κορδοσιτων փոխանակ բուն Հայերէն Կորդ--ոց: Ասկէ կը հետեւի թէ ցանկը յունարէնէ թարգմանուած է:

2 Յուն. զանց առած: - Ծովի գրութիւնը՝ փոխանակ Ծովի, նշնպէս յունական բնագիր մը կ'ենթադրէ. վասն զի ո՛վ երկրորբառը միայն յուն. օ-ին տառագարձութիւնն է:

3 Յուն. ὁ ἕβδομος ἄρχων ὁ ἕτερος κομιτατήσιος. Ուրեմն κομιτατήσιος = քրեւի: Կ'երեւայ թէ յունարէնն այսպէս կարգաւու է. ὁ ἕβδομος ὄρχων (τῆς Σωφαινηνῶν χώρας. ὁ ὄγδοος ἄρχων τῆς Γωγαρηνῶν χώρας) ὁ ἕτερος κομιτατήσιος.

նուէին, պահպանել. «եւ բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն:», Արշակ թագաւորին ժամանակը՝ այս պաշտօնը մարդպետութեան հետ կապուած էր, անոր համար մարդպետը՝ նախարարներուն մէջ առաջին պատիւն ունէր (Փաւստ. Բիւզ. Ե. է. էջ 206):¹ Փաւստոսին ըսածը՝ թէ այս երկու պաշտօնները շատոնց իրարու հետ կապուած էին, կ'երեւայ թէ Ագաթանգեղոս կը ջրէ, որ յատկապէս մարդպետն երրորդ տեղը կը յիշէ: Իսկ եթէ ենթադրենք, որ գուցէ այժմեան բնագրին մէջ կարգը խանգարուած է², Աղձնեաց իշխանը սխալ տեղ մը մտեր է, եւ եթէ զինքը սպարապետէն ետքը դնենք՝ հետեւեալ շարքը կ'ունենանք.

1 Փաւստոսի խօսքերն ասոնք են. «Իսկ Գրաստաման ներքինին, որ յամն Տիրանայ Թագաւորին Հայոց, լեւ էր էլիսոն քան Գաստոսին (Անգիւլ) եւ *ἐπίτροπος* (բառական *πεπιστευμένος*, հաստատարի՞մ) գանձուցն Անգեղ բերդին, եւ ամենայն բերդացն արքունի՞ որ ի կողմանս յայնս, սոյնպէս եւ յերկրին Ծոփաց ի Բնարեղ բերդին գանձքն լեւ էին ընդ նոքա, եւ բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն: Եւ քանզի այս գործակալութիւն (նախարարութիւն Անգեղ-տան) եւ մարդպետութիւն, որում հայրն կոչէին ներքինեաց՝ գործ (ընթերցիր գործ ֆ) լեւ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեան Արշակունոյ — եւ զայս Գրաստաման ներքինի, շէլիսոն զԱնգեղ-տանն գերեալ տարեալ էր յերկիրն Պարսից», եւն:

2 Այս հանկը՝ ինչպէս տեսնը (էջ 9, Ծան. 1) յունական բնագրէ մը թարգմանուած է: Այժմեան յունական բնագրին մէջ (էջ 68, 45 Լագարդ) խառնակութիւն կայ, վասն զի Ծոփաց իշխանը դուրս ինկած է եւ երկրորդ քրեւիտին (*κομιτατήσιος*) քով՝ անոր աշխարհին յիշատակութիւնն ալ (*ὁ τῆς Γωγαθηῶν χῶρος*) նոյնպէս դուրս ձգուած է:

Ա.

Բ.

1. Սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն.
2. Սահմանակալն յԱսորեստանեաց կողմանէն.
3. Սահմանակալն յԱրուաստան կողմանէն.
4. Սահմանակալն ի Մասքիթաց կողմանէն.
5. Մեծ իշխանն Անգեղտան.
6. Թագադիր Առլիքն.
7. Սպարապետն մեծ:

1. Իշխանն Անգեղտան, իշխանն Մարդպետութեան իշխանութեանն.
2. Իշխանն Թագակապ՝ իշխանութեանն Ասպետութեան.
3. Իշխանն Սպարապետութեան, զորավար Հայոց աշխարհին.¹
4. Իշխանն Աղձնեաց՝ որ Բրիւնիէն Բէն.
5. Իշխանն Կորդովտաց աշխարհին.
6. Իշխանն Ծովփաց աշխարհին.
7. Իշխանն Գարգարացւոց աշխարհին՝ որ Բրիւնիէն անուանեալ Բրիւնիէն:

Անկէ ետքը՝ երկու ցանկին մէջ ալ հաւասարապէս Մոկաց, Սիւնեաց եւ Ռշտունեաց իշխանները կը յիշուին:

1 Նոյն կարգը նաեւ այն իշխաններուն ցանկին մէջ պահուած է, որոնք՝ զՆերսէս ձեռնադրութեան համար Կեսարիա տարած էին (Փառստ. Գ. Գ. էջ 71):

1. "ՉՀայր մեծ իշխանն մարդպետութեան,
2. զԹագարատ մեծ իշխանն ասպետութեան,
3. զԱսսակ մեծ իշխանն սպարապետութեան," եւն:

Բնագիրը պակասաւոր է եւ փոխանակ զԹագարատ Բէն իշխանն ասպարապետութեան՝ կարգաւոր է . . . զԲ. Բէն իշխանն ասպետութեան էւ զԱսսակ Բէն իշխանն սպարապետութեան:

Նոյնպէս այն հրեշտակութեան ժամանակը՝ որ Հահակայ ձեռնադրութեան ընկերացաւ (Փառստ. Գ. ԺԲ. էջ 45), գրուած է՝ "Իշխանն մարդպետութեան, որում անունն հայր կոչէր," առաջին տեղը:

Գժուարին է կարծել՝ թէ ասով նախնական բնագիրը մեր առջեւն ունենանք եւ Ք. ցանկին խումբը՝ 5—7 Ա. խմբին հետ համաձայն ըլլայ: Մեր յառաջ բերած առաջին տեղէն կարելի է արդէն հետեւցընել՝ թէ միայն չորս ըդեաշխ կայ: Անոր հետ կապակցութիւն ունի Փաւստոսի Բիւզ. Գ. Բ. էջ 21. հետեւեալ կտորը. «Ջայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր ըդեաշխն. որ էր մի ի չորից, գահերէց բարձրերէց տաճարին արքունի:» Ինչպէս հոս, նմանապէս առ Ագաթանգեղ. էջ 650 գահերէց բացատրութիւնը կը գործածուի:

Լազարդ երկրող իշխանահամարին մէջ չորս սահմանակալք չկարենալով գտնել՝ առանց քննելու, կը վճռէ թէ վերոյիշեալ երկու ցանկերն այլեւայլ ժամանակներէ են: Այն նահանգները՝ որոնց գլխաւորները սահմանակալք էին, հաւանականագոյնս կորսուած են երկրորդ իշխանահամարին արժէք ունեցած ժամանակը: (Ագաթ. էջ 162:) Եթէ Լազարդ քիչ մ'աւելի Փաւստ. Բիւզանդացւով զբաղած ըլլար, եւ ասոր քով գտնուած ուղեկից նախարարաց նման ցանկին¹ ի մերձուստ ծանօթացած

1 Գ. ԺԲ. էջ 29. 12 իշխան կը համրուի, գլխաւորը Աղաբաշ Կապուտպիտն է: (Բնագրին սկիզբն եղծած է), — Գ. ԺԳ. էջ 38. 4 իշխան, որոնց գլխաւորն է Ա. Ա., իշխանն Սահառունեաց, (զումն, τῆνδ' ἡμῶν τὸν δεῖνα, որմէ վենեաացիք եւ Լաուէր Ջումն յատուկ անունը շինեցին. նոյնպէս Գ. ԺԲ. էջ 29 միայն Սահառունեաց իշխանը գիտ-

ըլլար, այն ատեն այսպիսի դատաստան մը չէր կտրեր: Գեղցէր՝ իրաւամբ կը ժխտէ Լազարդի հանած հետեւութիւնն եւ կ'ըսէ, թէ « Թերեւս սահմանակալները ժամանակ ունեցած չէին Գամբաց աշխարհը դիւանագիտական երթեւեկութիւնը մէկտեղ ընելու, » Այս ենթադրութիւնն ալ ամենայն մասամբ ուղիղ չէ: Ըստ ինքեան ընեսաշիններէն երկուքը յիշատակուած են, բայց միայն թէ ըստայայտ իբր « սահմանակալ » չեն նշակուած:

Գուգարաց² ընեշխին՝ Մասքթաց կողման ընեշխին հետ նոյն ըլլալուն վրայ ամենեւին տարակոյս չկայ: Գուգարք՝ յուն. Γωγαρηνή ինչպէս եւ Χορζηνή (կարգա՛ Χο(λα)ρζηνή = Կաղարջք) ու παρώρεια τοῦ Παρυάδρου (ընեսագաւառը) Արացիներէն յօփշտակուած էին ժամանակաւ (Ստրաբ. իա 14, 5 էջ 528): Կաղարջք հայկական յետնագոյն բաժաման ատեն՝ Գուգարաց նահանգին 9 գաւառ-

մամբ բոլոր յիշուած իշխաններուն մէջ անանուն կը մնայ): — Գ. թշ. էջ 44, շորս իշխանք անուամբ յիշուած, որոնց գլուխն է ողորդօղիքը, եւ 10 անանուն: — Գ. թե. էջ 45, անուամբ յառաջ բերուած երկու իշխան, որոնց առաջինն է հայր ժորդօղիքը, եւ 10 անանուն: — Գ. ի. էջ 79. — Գ. թա. էջ 103. 10 յանուանէ յիշուած իշխանք եւ անոնց գլուխը եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս. Գ. Գ. էջ 71. 9 յականէ յանուանէ յառաջ բերուած իշխանք, որոնց գլխաւորն է հայր ժորդօղիքը (բնագիրը բաց ունի, տ. վերը էջ 11, Ծան. 1):

1 Die Anfänge der armenischen Kirche. Berichte der Sächs. Ges. d. Wiss. 1895 p. 166.

2 Գորգարացոց կ'երեւայ թէ յունական բնագրին մէկ սխալին հետ կապակցութիւն ունի, Γωγαρέων փոխանակ Γωγαρηνῶν.

ներէն մէկը կը կազմէր եւ հիւսիսային կողմանէ իրեն սահմանակից ունէր վրական Մցխէթի նահանգը՝ Մասքթաց հին երկիրը, որ յետոյ Սամցխէ կոչուեցաւ¹: Լագարդ (էջ 146) իրաւունք կ'ունենայ ըստ այսմ երբ Ագաթանգեղոսի Մասքիթքին մէջ Մասքութք կը տեսնէ, մինչդեռ յոյն թարգմանիչը սխալմամբ Փ. Բիւզանդացւոյ Մազքութքին հաւասար կը դասէ եւ Հոնք կը համարի²: «Սահմանակալ ի Մասքթաց կողմանէն», բացատրութիւնը՝ ամենայն մասամբ կը համապատասխանէ քղեաշխ Գուգարաց բացատրութեան: Ամենուն ծանօթ են սպանիական, դանիական եւ գերմանական սահմանք: Ե. դարուն քղեաշխն Գուգարացւոց (Ճիշդ այսպէս Մովս. Խոր. էջ 258) Աշուշայ, որուն կնիքը հասած է մեզի՝ AC]OYCAC ΠΙΤΙΑΞΗC IBIPΩN KAPXHΔΩN(?) մակագրովս, շատ նշանաւոր դեր մը խաղացած է: Ղաղար Փարպ. (տպ. վե՛ն. 1891, էջ 149, 165, 177, 191, 364—366 եւն.) միշտ քղեաշխն Վրաց տիտղոսը կու տայ անոր. ընդհակառակն Կորիւն՝ Երանելւոյն Մաշտոցի վարքին մէջ (տպ. վե՛ն. 1833, էջ 20) միայն իշխան Տաշրացւոց (այսինքն՝ Տաշիր, Գուգարաց գաւառի մը) կ'անուանէ:

¹Վ. Ի. Բրոսսէ. Description géographique de la Géorgie trad. par Brosset էջ 75, 81.

² Ագաթանգեղոս հրատարակ. էջ 83, 93. ἀπὸ τῶν Μασαχούτων Οὐγγῶν μερῶν. Ասոր վրայ մանրամասն ուրիշ տեղ կը խօսիմ:

Նմանապէս Աղձնեաց ըղեւշխին՝ Արուստանի կողման սահմանակալին հետ նոյնութիւնը յայտ յանդիման է: Արուստան ըսելով հասկընալու ենք արաբական սահմանագաւառը (Bēθ 'Araβājē) Մծբին մայրաքաղքով, որ 297ի խաղաղութենէն ի վեր ուղղակի հռոմէական իշխանութեան տակ էր:

Մեծ նշանակութիւն ունի նաեւ Փաւստոսի (Գ. ծա. էջ 159. Ե. ը — ժ[թ.]) նախարարաց Արշակ թագաւորէն հեռանալուն եւ Մուշեղ սպարապետին ձեռօք վերստին նուաճուելուն վրայ տուած տեղեկութիւնը: Առաջնոյն մէջ կը կարդանք. « Բայց նախ այսմ գնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագանիին: Նախ ըղեւշխին Աղձնեաց, եւ Նոր Շիրական բղեաշխն, եւ Մահկեր-տանն, եւ Նիհորականն, եւ Գասն (Գասընտրէին), եւ ամենայն նախարարութիւն Աղձնեաց, եւ զօրն եւ տունն տոհմին (= ոստան) Աղձնեաց¹ կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ, եւ չոգան կացին առաջի արքային Պարսկաց Շապհոյ². եւ պարիսպ ածէին ի Հայոց կուսէ, որ Չորայն³ կոչեն, դրունս դնէին. եւ զատուցին զիւրեանց աշխարհն ի Հայոց: Եւ յետ սորա Գուգարաց ըղեւշխն, եւ

¹ Այս օրհ, (աւօ) կամ (աւօ),]աւ, օ¹;) կը գտնուի 410էն սկսեալ իբր առանձին եպիսկոպոսոս թիւն, ինչպէս եւ Արձն ZDMG. 43, 395, 4. 396, 10. 403, 8.

² Մ-րհ-ր-ր Erānšahr. էջ 24:

³ Հմմտ. Սերէոս էջ 108 [Ղեւոնդ 26. սեռ. Չորայոյ]: շխ-բւ-ն՝ Zur Gesch. Armeniens und der ersten Kriege der Araber p. 15.

յետ սորա Չորայ¹ գաւառին տէրն, եւ կողբայ գաւառին տէրն, եւ ընդ նոսա Գարդմանաձորոյ տէրն: Եւ որք մօտ էին ի նոսա կողմն այնր ձեռին, որ շուրջ էին զնորօք, միահաղոյն ապստամբեցին ի Թագաւորէն Հայոց Արշակայ. եւ չոգան գնացին առաջի Թագաւորին Պարսից Շապհոյ:

Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ եւ ամուր գաւառն Տմորեաց, եւ ամուր աշխարհն կորդեաց. ապա եւ տէր գաւառին կորդուաց չոգաւ եկաց առաջի Թագաւորին Պարսից:

Յետ այսորիկ ապստամբեաց ի Թագաւորէն Հայոց եւ ձեռին իշխանութեանն տան Հայոց Թագաւորին, որ էր զԱտրպատական աշխարհաւն, յետս եկաց ի Թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Մարաց. յետս եկաց յարքայէն Հայոց, եւ աշխարհն կազբից եթող զարքայն Հայոց. եւ գնաց Սաղամուտ տէրն Անձտեայ, եւ ընդ նմա իշխանն մեծի Ծոփաց. եւ գնացին առ Թագաւորն Յունաց: Վերստին նուաճուած երկիրներու կամ գաւառներու անուններէն՝ աւելի պայծառ կը տեսնուի իւրաքանչիւր նախարարներուն իրարու նկատմամբ բռնած փոխադարձ դիրքը: Նախ եւ առաջ կը յիշուի «զտուն Թագաւորին Հայոց, որ յԱտրպատականին էր,» զոր Շապուհ Թագաւորը Հայոց Արշակ արքային պարգեւ տուած էր,² յետոյ՝ Նոր Շիրական,

¹ Չորը Գուգարք նահանգին մէջ կ'իյնայ, եւ վերջէն կողբի եւնի պէս Արաց կը վերաբերէր:

² Փաւստ. Դ. Ժ. էջ 224. «Յայնմ ժամանակի

վերջէն Կորդուք, Կորդիք, Տմորիք եւ Մարաց կողմերը, ուստի այնպիսի երկիրներ, զորոնք Պարսիկները գրաւած էին: Ապա կը յաջորդէ Արձախ գաւառն եւ Աղուանից անցած՝ Ուտի, Շակաշէն, Գարգմանայ-ձորն, Գողթեւն գաւառները, ինչպէս նաեւ Պարսք (Πάρσιος) Փայտակարանին: Յայտնի կը տեսնուի այս ամէն գաւառներէն՝ թէ Աղուանից թագաւորը նուաճած էր: Ասոնց կը յաջորդէ Վրաց թագաւորին պարտութիւնն եւ Փառաւազեան վրացի արքունական ցեղին խաչուիլը, նմանապէս Գուգարաց ըղեշխին բռնուիլն ու սպանուիլը, որ յայտնապէս Վրաց կողմն անցած էր: Այս շարքը կը փակէ Աղձնեաց ըղեշխին գերութիւնն եւ Մեծ Ծոփաց, Անգեղ-տան, եւ Անձտայ նուաճումը, որոնք ի հնուց հռոմէական իշխանութեան տակ էին:

Պէտք ենք ստոյգ համարիլ, թէ նաեւ Մարք՝ Նոր-Շիրականի ըղեշխին տակ էին, գուցէ նաեւ Տմորիք,¹ Կորդիք եւ Կորդուք

կոչէր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զթագաւորն Հայոց զԱրշակ. եւ մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով եւ մեծաւ փառօք, բազում գանձու սակով եւ արծաթով ամենայն մեծութեամբ թագաւորութեան: Եւ իբրեւ զեղբայր որպէս զորդի գրգեալ եղեւ ի նմանէ, եւ երկրորդական զէջ քսանն քայր նմա յԱբրդաբախտ աշխարհին:» Անշուշտ խնդիրը՝ ուստաններուն վրայ է, ինչպէս որ հայ թագաւորները Հռոմայեցւոց երկրին մէջ ալ ունէին:

1 Ստրաբ. 10 ԺԳ. Է. էջ 528 Ταμωνίτιν, որ կարգաւու է Ταμωνίτιν. Ταρωνίτιν սրբագրութեան գէմ էր 7ը Լագարդ, Ges. Abh. 46 N. 6. Հմմտ. նորերս Տաւուշիկ Սասունը, էջ 9 (SBWA. հտ. 133, 1895 Թ. IV) թրգմ. Հ.

գաւառներն ալ. իսկ Գուգարաց ըղեաշխը՝
Շակաշէն, Ուտի, Գարդման եւն սահմանակից
գաւառներուն վրայ կը հսկէր: Ամէնէն դժուա-
րինն է Ասորեստանեաց կողման բղեշխին տեղը
ճիշդ որոշել: Պարսկաստանի վերաբերող Ասո-
րեստանի վրայ (Ագիաբենէ՝ Արբեղա մայրա-
քաղքով եւ Նինուէի շրջակայքը) չի կրնար
մտածուիլ, վասն զի ասիկա Նոր Շիրականի
վերաբերող Մահկեր-տուն եւ Գասն սահման-
ներուն ճիշդ հարաւային կամ հարաւային-
արեւելեան կողմն էր, ուստի Նոր Շիրականի
ըղեշխին իշխանութեան տակ կ'իյնար: Նոյնպէս
եկեղեցական տեսակէտով՝ Bēṣ Māhqert (Մահ-
կերտուն) եւ Dasēn (Գասն) թեմերը, ինչպէս
նաեւ Ռէմմինին եւ առ. յ. յ. (ܐܘܨܝܘܢܝܘܬܐ,
չստուգուած թեմերը Hēḏaijaβ-Arbēlի մետրա-
պոլտին տակն էին, իսկ Bēṣ Quardū (Կորդուք),
Bēṣ Zaβḏē (Ծաւղեայք), Bēṣ Reḥimē եւ
Moksajē (Մոկք) Մծրնայ կը վերաբերէին: Բայց
եթէ վերոյիշեալ (էջ 11) երկու ցանկերն իրա-
րու հետ համեմատենք՝ յայտնապէս կը տես-
նենք, որ Կորդուաց իշխանը՝ Նոր Շիրականի
ըղեաշխին տեղը բռնած է, կամ անոր հա-
մար՝ որ ասիկա անձամբ չէր կրնար երթալ եւ

Բ. Ա. Պիլլէզիկճեան, «Աղբ. Մատենադարան», ԻԱ. Ա ինննա
1896, էջ 11: Սուան Մովս. Խոր. Բ. շէ. Տմորիքը Կոր-
դուաց հետ հաւասար կը դնէ. հմմտ. Բ. շէ. Գ. շէ: Եղիշէ
առ. Լանդլուա, Collection II 214. Տմորիք եւ Կորդիք: Առ
Ստոյն Յեսուայ Սիւնակեցի գլ. Եր. Խդ. էջ 18, 1, 19 հրտ.
W. Wright, ܠܘܨܝܘܬܐ կ'անուանուին:

կամ վասն զի Կորդուաց իշխանը՝ միանգամայն
 Նոր Շիրականի ընտաշխն էր: Այս պարա-
 գային մէջ անհրաժեշտաբար կը հետեւի որ
 Ծովաց իշխանն ալ — ինք զինքս զգուշու-
 թեամբ բացատրելու համար — « յԱսորես-
 տանեաց կողմանէն » ընտաշխին իբր փոխա-
 նորդ՝ մեծամեծաց ուղեկցութեան մասնակցե-
 ցաւ: Հիմայ ամէն բանէ յառաջ խնդիրն այն
 է թէ հոս ո՞ր Ծովիքն իմանալու ենք. Եփրա-
 տայ քով եղած արեւմտեանը թէ Մեծ Ծովիք
 ըսուած արեւելեանը՝ Նփրկերտ (Martyropolis)
 մայրաքաղքով: Այս խնդիրս որոշելու համար՝
 լաւագոյնն է մեզի կռուան բռնել Ներսէհի
 խաղաղութեան դաշինքին ենթադրած քաղա-
 քական յարաբերութիւնները. այս դաշնա-
 դրութիւնը շատ մօտ է ժամանակաւ Ագաթան-
 գեղեայ յիշած հրեշտակութեան: 297ին ար-
 քայից արքան ստիպուեցաւ հաւանիլ, որ (Հայաս-
 տանի վերաբերող) Անգեղ-տան նախարարու-
 թիւնը Ծովաց հետ, իսկ Արծն Կորդուաց եւ
 Ծաւդէից (Zabdikene) հետ հռոմէական պե-
 տութենէն անձկագոյնս կախում ունենան:՝
 Սակայն այսու հանդերձ՝ անոնք Հայոց թա-
 գաւորութեան վերաբերելէ չդադրեցան: Բա-

1 Պետր. Պատրիկ՝ Հատակոստր 14 առ Դէնդրօքի
 Hist. Gr. min. I 433, 20-23: ἦν δὲ τὰ κεφάλαια τῆς
 προσειάας ταῦτα, ὥστε κατὰ τὸ ἀνατολικὸν κλίμα τὴν
 Ἰντηληνὴν (ընթերցիτε Ἰγγηληνὴν) μετὰ Σωφηνῆς καὶ
 Ἀρζανηνὴν μετὰ Καρδουηνῶν καὶ Ζαβδικηνῆς Ῥωμαίους
 ἔχειν.

ցատրութեանս այս ըմբռնումէն կը հետեւի թէ կորդուք եւ Ծաւղեայք (Ծօղէք) Արծնէն կախում ունէին, եւ այս երեք գաւառաց իրարու հետ անձուկ կապուած ըլլալը յայտնի է նաեւ եկեղեցական այն բաժանումէն, որ հիմնուած է Յովհաննոսի խաղաղութեան սահմաններուն նկատմամբ ըրած տրամադրութեանց վրայ: Այս բաժանման համաձայն՝ կորդուք եւ Ծաւղեայք թեմերը, ինչպէս եւ Արծն Մծբնայ մետրապոլիտութեան կը վերաբերէին: Յայտնապէս կորդուաց եւ Ծաւղէից սատրապներն Աղձնեաց ըղեշխին տակն էին: Նման յարաբերութիւն մ'ալ պէտք է ենթադրել Անգեղ-տան եւ Ծոփաց միջեւ: Անգեղ-տունը (Ingilene) հին Անգղ բերդով (ասոր. Aggēl) միասին կը համապատասխանէ յետնագոյն ժամանակի Չորրորդ Հայոց Գէգիք ըսուած գաւառին — զոր Գէորգ Արպրացին 960 չλίμα Διγησιονης¹ կ'անուանէ — ինչպէս Արպերտ լաւ միտ դրած է: Անգեղ-տան կառավարն էր Հայր մարդպետը, որ Մեծ Ծոփաց² Բնաբեղ բերդին գանձերուն վրայ ալ կը հսկէր: Ուստի կ'երեւայ թէ Մեծ Ծոփքն այն դաշնադրութեան մէջ Անգեղ տան ստորակարգ մաս համարուած է: Հոս Ծոփք ըսելով՝ միայն արեւմտեանը՝ Եփրատայ վրայինը կրնայ հասկըցուիլ,³ որ ուղղակի Հռոմէական պե-

1 Հ. Կեղերտ՝ Monatsber. der Berl. Akad. 1873, p. 198. Հմմտ. Գեղերտ՝ Georgius Cyprius p. 180:

2 Հ. Գեղերտ՝ Georgius Cyprius p. 161/2.

3 Հմմտ. Կեղերտ՝ անդ էջ 200:

տութեան սահմանակից էր եւ անկէ ետքը՝ միշտ Հռոմայեցւոց ազդեցութեան տակն էր: Այս գաւառը՝ երբեմն պարզապէս ծովիք կ'ըսուի — այսպէս Ղազար Փարպ. էջ 205, 532¹ եւ Սուտ Մովս. Խոր. Աշխարհագրութիւն հրա. Սուբրեանի էջ 30, 15 — երբեմն ծովիք Շահնայ (սեռ. Ծովաց Շահէի) Փաւստ. Գ. թ. էջ 21, Շահունի Ծովիք Փաւստ. Գ. ժը. էջ 29 կամ ծովիք Շահուննոց Փաւստ. Գ. իղ. էջ 146, երբեմն ալ միւս ծովիք Փաւստ. Գ. դ. էջ 73: Հայոց թագաւորութեան բաժնուելէն վերջը՝ հայկական հարաւային հինգ սատրապութիւնները — որոնց մէջ նաեւ ԴՅօփոյն = Ծովիք Շահունի — հռոմէական իշխանութեան տակ ինկան, բայց իրենց բնիկ իշխանները պահեցին: Անկէ ետքը՝ երկու պետութեանց սահմանը կը կազմէր Նիմփիոս կամ Քաղերթ: 536ին Յուստինիանոս սատրապները վերցուց եւ հինգ սատրապութիւններէն Չորրորդ Հայք² նահանգը կազմեց: Ս. Մարտէնի՝ Ստոյն Մով. Խոր. Աշխարհագրութեան բնագրին մէջ՝ (Mém. sur l'Arménie II 360) Ծովիք՝ Շահախ (որ թրքերէն բառ է غلا شاه թագաւորական լեռ) արդի վերադիրն առած է, որ հայ. Շահունի կամ Շահնայ = «թագաւորական» բառին թարգմանութիւնն է: Ծովիք Շահունի կը տարածուէր նաեւ Արածանոյ հիւսիսային մէկ

¹ Հմմտ. Գեղեցեք՝ Georg. Cypr., p. XLIX s.

² Պրոկոպ. de aedif III. 1. 3. Justiniani novell XXXI. 3. Հմմտ. Գեղեցեք՝ Georg. Cypr. XLVI ss.

մասին վրայ եւ Խողանի (այժմ՝ Xozāt) եւ Չմշկա-
ծակի¹ քաղաքներն ալ կը պարփակէր:

Ուստի տարակոյս չի կրնար վերցընել, թէ
Ագաթանգեղեայ զմեզ զբաղեցընող դեսպա-
նութեան ցուցակին մէջ Ծոփաց երկրի իշխանն
է Ծոփք Շահունոց իշխանը. Ծոփաց իշխանը
կամ յԱսորեստանեաց կողմանէն բռնելիսն փո-
խանորդն է կամ նոյն իսկ ինքը նոյն անձն է:
Այս բռնելիսն իշխանութեան տակ եղած եր-
կիրներն են Ծոփք Շահունի, Անգեղ-տուն,
Ծոփք մեծ եւ Անձտայ ('Avζητηγη) սատրա-
պութիւնը: Ասորեստանեայք (եւ ոչ Ասոր-
եստան) բացատրութեան ընտրութիւնն ա-
ռանց նշանակութեան չէ: Ասիկա բնականապէս
այստեղ բուն Ասորեստան չի կրնար նշանակել,
այլ անշուշտ այն իմաստով գործածուեր է,
ինչ իմաստով որ Կորեան Ասորիքը՝ (Տրտ.
Վեն. 1833, էջ 9, 10.) որ Ամիգն եւ Եգե-
սիան ալ կը բովանդակէ իր մէջը. ուստի էա-
պէս Ասորոց Միջագետքին կը համապատաս-
խանէ: Յունարէնէ եղած թարգմանութեան մը
մէջ Ասորեստանեայք ձեւին վրայ՝ փոխանակ
Ասորիքի, պէտք չէ զարմանալ, պատմական
տեսակէտով ամենեւին հաւանական չէ որ Ուռ-
հայաստանի (Osroene) թագաւորութեան դէմ
դրուած ըլլայ սահմանը: Այս սահմանին ծագ-
ման վրայ յետագայ ըսելիքներէս հաւանական
կ'երեւայ, որ նոյնը Սելեւկեանց դէմ դրուած

¹ Գեյգեր՝ Georg. Cypr., p. 172—174:

էր, ուստի «Ասորեստանեայք»ը Սելեւկեանք
հասկընալու է:

Հիմայ գիւրաւ կը մեկնուի Ամիանոսի այն
բազմաչարչար տեղը՝ 23, 6, 14, ուր պարս-
կական նահանգները կը թուէ ըսելով.
Sunt autem in omni Perside hae regiones
maximae, quas vitaxae id est magistri
equitum curant, et reges et satrapae
— nam minores plurimas recensere difficile
est et superfluum — Assyria, Susiana, Media,
Persis, Parthia etc.* Բդեաշխի մ'իշխանութեան
տակ միայն ամէնէն յառաջ յիշուած Ասորես-
տան նահանգը կար, մինչդեռ մեկալ նահանգ-
ները՝ մարզպաններէ (satrapae) եւ թագաւոր-
ներէ, այսինքն՝ բնիկ նախարարներէ (ša ʾrdārān
ملوك الطوائف) կամ թագաւորի տիտղոս կրող
արքայորդիներէ կը կառավարուէին:

Չորս ընկալիներուն ծագումը՝ Տիգրան
Մեծէն է, ինչպէս Պղոստ. Ղուկ. 21էն կ'երեւայ.
Βασιλείς δὲ πολλοὶ μὲν ἦσαν οἱ θεραπεύοντες
αὐτόν, τέσσαρες δέ, οὓς ἀεὶ περὶ αὐτόν
εἶχεν ὡσπερ ὀπαδοὺς ἢ δορυφόρους,
ἰππότη μὲν εὐαύνοντι πεζοὺς παραθέοντας ἐν
χιτωνίσκοις, καθημένω δὲ καὶ χρηματίζοντι
περιεστῶτας ἐπηλλαγμέναις δι' ἀλλήλων ταῖς

* Թրզմ. — Պարսկաստանի ամենամեծ նահանգ-
ներն ասոնք են. Ասորեստան, Շուշ, Մարաստան, Պարսք,
Պարթեւաստան եւն, զորոնք բնիկայք, այսինքն՝ աս-
պետներ, թագաւորներ եւ նախարար կը կառավարեն.
Իսկ բազմաթիւ փոքր գաւառներն հաշուելը դժուար է
եւ աներրդ:

χερσίν, ὅπερ ἐδόκει μάλιστα τῶν σχημάτων
ἐξομολόγησις εἶναι δουλείας.* Հակոբակ հոռ-
մէական շափաղանցութեան՝ հոս դիւրաւ կը
նշմարուին դարձեալ չորս բղեաշիները: Ան-
տարակոյս գերմ. միջին դարեան ասպետներուն
թագաւորաց թագադրութեան ժամանակ աս-
պանդակ բռնելն եւ ուրիշ պատուոյ պաշտօններ
կատարելը՝ հոռմայեցի պատմագրին նոյնպիսի
բաներ մը պիտի երեւային:՝

Տիգրան Մեծ՝ Տիգրան Առաջնոյն² որդին
եւ հաւանականագոյնս Արտաւազդ Ա. թա-
գաւորին կրտսեր եղբայրը, որ Պարթեւաց քով
պատանդ էր, Պարթեւաց ձեռքովը թագաւոր
դրուելուն փոխարէն ստիպուած անոնց 70 վիճակ
(Talgau) ձգեց. աս վիճակներուն մեծ բազմու-
թիւնը զմեզ ենթադրութեանց դիմելու կը
ստիպէ. թէ խնդիրն այն երկիրներուն վրայ է,
զորոնք Տիգրանին նախորդները հեռոջեակ
Ատրպատականի Մարերէն ու Վրացիներէն խլե-
ցին. նոյնպէս կը ստիպէ ենթադրել թէ Միհրդատ
Մեծ՝ Արշակունեաց հարստութեանց³ առաջին

* Թարգմ. — Շատ թագաւորներ անոր (Տի-
գրանայ) կը ծառայէին, քայց անոնցմէ չորսը միշտ
իւր քովն ունէր իբր ուղեկից կամ անձնապահ, որոնք
թագաւորին ձրաւարած ժամանակը՝ հետիոտն անոր
կը հետեւէին ձիրանազգեսաց, իսկ նստած եւ խորհուրդ
ըրած ատենը՝ ձեռքերը խաչածու կը դնէին, այս կե-
ցուածքը ծառայութեան նշան էր:

1 Գ.՝-Դ.՝ Կ.՝ ալ (Geschichte Irans p. 85) վերի
ճանօթութիւնը սխալ մեկնած է:

2 Ապպիան. Ատոր. 48:

3 Ա.Ս շատ կարեւոր եւ ստոյգ ապացուցուած

Թագաւորը, Հայոց Արտաւազգ Թագաւորին դէմ պատերազմ բացաւ՝ այս երկու ազգին խնդրանաց ու շահուն համար: Նոյն ժամանակամիջոցին Աղուանից Թագաւորութիւնն ալ կազմուած պիտի ըլլայ, որ 26 այլալեզու ազգերէ կը բաղկանար, որոնց ամէն մէկն յառաջագոյն իւր իշխանն ունեցած էր:¹ Տիգրան գահ ելածին պէս՝ ետեւէ եղաւ այն կորուստներուն դիմացն ուրիշ կողմանէ փոխարէն գտնել: Նախ եւ առաջ Ծովաց Թագաւորութեան վրայ յարձակեցաւ եւ անոր տիրեց: Այն ժամանակուան Արտանէս Թագաւորը՝ Զարիադրիսին յաջորդներէն մէկը, վար անուեցաւ (95—93 ի մէջերը ն. թ.): Յետոյ՝ Միհրդատ Բ. Մեծին (90 ն. թ.) մահուընէն վերջն Արշակունեաց տան մէջ ծագած² գահակալութեան կռիւները՝ Տիգրան իրեն յօգուտ գործածեց՝ Պարթեւաց պաշտպանութեան տակ եղող Արացիներէն ու Մարերէն այն գաւառներն ետ առնելով, որոնցմէ հրաժարած էր: Բայց ասով ալ գոհ չեղաւ, այլ Ատրպատականէն ուրիշ գաւառներ ալ յափշտակեց, ինչպէս Մեծ-Աղբակ (²Αλβάχη) եւ նոյն իսկ այս երկիրն ասպատակելով՝ մինչեւ

իրողութիւնը՝ դրամներուն բոլորովին նոր դասաւորում մը կը պահանջէ, ինչպէս Մէրսեա եւ ես 1896ին իմացանք:

¹ Ստրաբ. ԵԱ 4, 6, էջ 503: Հմմտ. Ա. Քրէշիւս Թեոփանէս Մեափիկնեցի 191:

² Պլուտ. Ղուկ. 36: Հմմտ. իմ Beiträge zur Gesch. und Sage von Eran գրութիւնս, ZDMG. 49, 644 եւն:

Եկրատան՝ Արշակունեաց ամառանոցը յառաջացաւ:¹ Նոյնպէս Նինոսի եւ Արբեղայի շրջակայքն աւերեց, այսինքն՝ Ադիաբենէի Թագաւորութիւնը, եւ ստիպեց Կորդուաց, Ադիաբենէի, Ատրպատականի, ինչպէս նաեւ Աղուանից եւ Վրաց Թագաւորները՝ որ իր վերին իշխանութիւնը ճանչնան:² Պարթեւք ասոր դէմ ոչ թէ միայն չկրցան բան մ'ընել, այլ նոյն իսկ ստիպուեցան նոր Թագաւորին ձգելու ամբողջ Միջագետքը՝ Ուոհայաստանի (Osroene) հարկատու իշխանութեան հետ միասին, եւ Տիգրանայ հետ դաշինք գնելու, որուն մէջ որոշ կերպով կ'երեւայ թէ «Արքայից արքայ», տիտղոսէն հրաժարեցան՝ նոյնը Տիգրանայ ձգելով: Այսպէս գոնէ բեւեռագիր արձանագրութեանց 89—87 եւ 80 Ն. Ք. թուականէն մեզի յականէ յանուանէ Գոտարզ Ա. եւ Որոդ Ա. ծանօթ պարթեւ Թագաւորներն իրենք զիրենք միայն Թագաւոր կ'անուանեն, մինչդեռ Տիգրան «Արքայից արքայ» կ'անուանէր ինք զինքը: Բայց ասով գործունեայ Թագաւորին փառասիրութիւնը չգոհացաւ տակաւին. վերջին Սելեւկեանց իրարու դէմ ըրած արիւնահեղ կռիւներն իրեն դէպ ի Ատրիք եւ դաշտային Ալիլիկիա ճամբայ բացին, այնպէս որ կրցաւ Ասիոյ Թագաւորներուն Թագը կապել (83 Ն. Ք.):

1 Իսիդ. քար. σταθμοί Παρθ. § 6 առ Կ. Միւլլերի՝ Geogr. Gr. min. I 250.

2 Սարաբ. տա 14, 15, էջ 532: Ադիաբենացւոց, Աղուանից եւ Վրաց վրայ, Պղոստ. Ղուկ. 26:

Անտիոքի մէջ Βαγαδάτης¹ (հինգ. Βαγα-
 δάτα) հին Սելեւկեանց պետութեան վրայ փո-
 խարքայ դրուեցաւ,² այս դէպքին յիշատակը՝
 հայ ժողովրդական զրոյցին մէջ ալ — Մար
 Աբասայ քով — պահուած է, որովհետեւ այն
 Βαγαδάταն Բագրատունեաց ազնուական ցեղին
 նահապետը կը համարուէր. «Յայնմ ժամանակի
 թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ
 փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհին Հայոց ի
 Մծբին քաղաքի³ . . . եւ յուղարկէ զնա ի Մրծա-

1 Այսպէս Մոնակ. 374 եւ Ատտ. 134. Իտալ. Աեռագիրք՝ μαγαδάτην.

2 Ապպիան. Ասոր. 48:

3 Տիգրանին Պարթեւաց ձեռք թագաւորական
 գահ բարձրացուելուն պատմական դէպքը՝ Մար Աբաս
 Արշակունի երկրորդական գծին Հայաստանի տիրելուն հետ
 կապած է, որ հազիւ անկէ 120 կամ մանաւանդ 160 տարի
 ետքը տեղի ունեցաւ: Որովհետեւ հեղինակին հայրենա-
 սիրութիւնը չէր ներեր՝ որ Արտաւազդ Առաջնոյն պարտու-
 թիւնն եւ Տիգրանին գահ ելլելուն հետ կապուած աննպաստ
 պարագաները խոստովանի, անոր համար ուրիշ միջոց մը
 հնարեց՝ ազգային հարստութիւնն Արշակունեաց երկրոր-
 դական գիծ մ'ընելով. դէպք մը, որ՝ ինչպէս յայտնի է,
 ժողովրդական պատմագրութեան մէջ շատ անգամ կը
 կրկնուի: Արշակ Փոքրին երբ գահ ելլելը՝ այս քաղաւա-
 ծոյին մէջ որոշ նշանակուած չէ, սակայն ամենեւին
 դժուարութիւն չկայ ենթադրելու, թէ թագաւորաց ցան-
 կին հեղինակը (էջ 10, 6. Langlois I 200 a) որ դէպքը Ար-
 շակայ 129թ տարին = 122 ն. Ք. (250—129) կը գնէ, այս
 տեղեկութիւնը Մար Աբասայ քով գտած է: Անշուշտ հե-
 ղինակը Տիգրանին գահակալութեան ճիշդ թուականն առ-
 ջեւը չունէր, բայց ձեւակերպութեան մէտ ըլլալուն՝ իրեն
 ամենէն պարզն երեւցած է՝ նոյնը Միհրդատ Մեծին կա-
 ռավարութեան անմիջապէս սկիզբը գնել: Արշակ Մեծին
 արուած առասպելական գահակալութեան ժամանակը՝ զոր

նայ¹ ընդ յարեւմուտս զաւրու մեծաւ եօթանասուն
 հազարաց սպառազինաց. եւ մեծամեծ իշխանօք
 նախարարաց հազարաց բիւրաւորաց, որում ոչ
 ոք կարէր զդէմ ունել պատերազմաւ: Սմա ընդ
 առաջ ելանէր Բագարատն Փառաւ <ւա> զեան²

Մար Աբաս (ոչ թէ թագաւորաց ցանկը) անոր կու տայ,
 հիմնուած է ամէն թագաւորաց Արշակ անունը կրելուն եւ
 անոնց զանազանող յատուկ անունները Մար Աբասայ
 անձանօթ ըլլալուն վրայ: Նոյնպէս անկէ ետքն ալ
Aršakā šarru կամ *šar šarrāni*-ին տարիներուն համեմատ
 կը համրէին թուականը: Ասկէ զատ՝ Մար Աբաս Արշակայ
 ապտամբութեան տարին (248/7), որ սեպագրերուն
 թուականութեան համեմատ բոլորովին ճիշդ է, շփօթած
 է Պարթեւաց Անգրագորաս նախարարին ապտամբու-
 թեան հետ (250. Յուստին. 41,4,3):

1 Ի ՄՅՔՆայ կարգաւու է փոխանակ ի ՄԻՅՆայ:
 Հմմտ. նաեւ Մրժուին, Սեր. էջ 58, 92:

2 Հմմտ. էջ 6, 10: Այս հօրենական անուամբ Բա-
 գարատը Աբաց թագաւորական ընտանեաց հետ կը կապուի
 (Փաւստ. Բիւզ. Ե. 11. 216), ըստ ինքեան անհաւանական
 բան մը չէ, վասն զի Բագրատունեաց նիստը վրարնակ Սպեր
 գաւառն էր (Փաւստ. Բիւզ. Ե. 17. էջ 263): — Բաճարոտ,
 Սպարոտոտ անուանց մէջ ք - ն ծ-ի անցնելով՝ յետոյ ք-ի փո-
 խուիլը՝ հայերէն չէ, այլ դրացի Ատրպատական գաւառա-
 բարբառէն, որուն այժմեան ձեւը րոտ է: [Հմմտ. այս Tāt
 ձայնաչրջութեան վրայօք W. Geiger, Grundriss der Iran.
 Philologie 12, 355 § 116]: Սուա Մովս. այս ձայնաչրջութեան
 օրէնքը շատ լաւ գիտէր, եւ իւր պատմութեան կցկցանքին
 մէջ ալ գործածեց: 'Ανάγγελος (Jos. ἀρχ. ἰουδ, ιε 22. 39/40)
 բարեկացի քուրճի եւ Հերոդոտի կողմնակիցը՝ Ἀνατος ὁ
 Βαγαδάτου πόλ. ἰουδ. 5, 531. 6, 229. իրարու կը խառնէ,
 եւ անկէ իւր սուղեքն ու թագադիր Ենանոս Բաճարոտնին
 կը կցկցէ (Բ. 17. էջ 98): Ասկէ յառաջ կու գայ իւր՝
 Բագրատունեաց սերնդեամբ հրեայ ըլլալուն գիւտը:
 Βαγαδάτηςը վերջէն (Բ. 17. էջ 142) Բաճարոտ երբայա-
 կան ձեւին կը դարձնէ, սակայն կը զգուշանայ այս աղբրսը
 յայտնապէս նշանակելու: Բնականապէս ինքը թէ զ'Αρχέ-

յորդուոցն Արամանեկայ նախարար մեծ Հանդերձ զաւրու: Մատուցանէ նմա պատարագ ոսկի եւ արծաթ. եւ զարդարէ զնա ի սնդր¹ եւ ի վահաս. պսակէ զնա ի թագ Հայրենի. եւ նստուցանէ զնա ի վերայ ոսկիապատ ականակուռ փահոյիցն. եւ տայ նմա զդուստր իւր ի կնութիւն: Ջսա արար Արշակ արքայ ասպետ շայաստան երկրին, որ էր իշխան² եւ հրամանատար ամենայն թագաւորութեանն հրամանաց գլուխ,³ եւ հայր արքայի, եւ եղբայր. որում ետ իշխանութիւն տէրութեանն այնորիկ: Մսկոտորեաց զնսկայսն, որ զաւրածողով եղնն ի վերայ նորա ի Միջագետս Ասորաց:⁴ »

71/70 ձմեռը Տիգրանին քանի մ'երկմիտ հարկատու թագաւորներն եւ չորրորդապետները Ղուկուղղոսին Ապպիոս Աղոզիոս գետպանին հետ յարարերութեան մէջ մտան՝ դաւադրական դիտմամբ,⁵ գլխաւորաբար Արդուաց Ջարրիենոս

λαος υἱὸς Μαγαδάτου πόλ. ἰουδ. 6, 229, եւ թէ ասոր կից Ἄνατος ὁ ἀπ' Ἀμμαοῦς, τῶν Σίμανος δορυφόρων ὁ φονικώτατος ἱουδαί' իւր նպատակին գործածած է:

1 Այս բառը Քաղբոց մէջ չկայ:

2 Իշխան է հրամանատար, ἐν διᾱ δυοῖν.

3 Քաղբերու մեկնութիւն հրամանատարին:

4 Մար Աբաս առ Սեր. 9 հրա. Պատմութեան: Սուս Մովս. Բ. Ը. էջ 78/79 զայս իւր Քաղբատուներից հրեայ ծագման ունեցած տեսութեան համեմատ փոխեր է:

5 Sallust. historiar. fragm. IV 8 ed. Kritz = IV 56 p. 179 ed. Maurenbrecher: tetrarchas regesque [ex]territos animi firmavit (scil. Apius Clodius). Պղտու. Ղուկ. գլ. 21. Ἄππιος Κλώδιος πολλοὺς μὲν ὀκειώσατο τῶν ὑποῦλος ἀκροωμένων τοῦ Ἀρμενίου δυναστῶν, ὧν εἰς ἦν καὶ Ζαοβιηνὸς ὁ τῆς Γορδουηνῆς βασιλεὺς.

Թագաւորը: Երբ Տիգրան իմացաւ Ջարբիենոսն իւր ամբողջ ընտանիքովը գլխատել տուաւ եւ անոր դղեակները յարքունիս գրաւեց:¹ Ակներբել է որ Սալուստիոսի այս առթիւ գործածած չորրորդապետբացատրութիւնը՝ չորսընասչիւներուն համար է, եւ Ջարբիենոս՝ անոնցմէ մէկը նկատուելուն դժուարութիւն չկայ: Այս դէպքէն կարելի էր ենթադրել, որ Ատրպատականէն առնուած *Ἀλβάχη*, այս է՝ Մեծ-Աղբակ ալ անոր իշխանութեան յանձնուեր էր: Սակայն ուրիշ մեկնութիւն մը վերջէն պատահածներուն աւելի կը յարմարի:

Ստոյգ է որ Տիգրան Ծովաց թագաւորութիւնը յարքունիս գրաւած էր, բայց Հայոց թագաւորներուն աւատային յօրինուածութեան վրայ հիմնուած քաղաքականութեան բոլորովին հակառակ է ենթադրել՝ որ գահազուրկ իշխաններուն ուրիշ կողմանէ հատուցում ըրած չըլլայ: Եւ կը տեսնենք *Μεθροβουζάνης* անուն իշխան մը, որ յետոյ Ծովաց թագաւորն եղաւ.² այս անունն Արիագրեանց տան մէջ ալ կը յիշուի.³

1 Պղոստ. Ղուկ. 21. 29. Սարաբ. 15 1, 24 էջ 747. Սա. Մովս. Խոր. Բ. 34. էջ 131 *Ջարբիենոս* (այլ ընթերց. *Ջարբիենոս*, *Ջարբիեն*, *Ջարբիեն*) կ'անուանէ զանիկա եւ կասպից թագաւոր կ'ընէ, որ իբր թէ Արտաշէս Բ. թագաւորին դէմ գլուխ բարձրացուցեր է, բայց Սմբատէն նուաճուեր եւ Հայաստան գերի տարուեր է:

2 Դիոդ. 31, 22 հմմտ. Պողիբ. 31, 17:

3 Արիան. 1, 16. 3: Դիոդ. 17, 21, 3. 15, 91. Նեպ. Դատ. 6. հմմտ. Մարկարտի Untersuch. zur Gesch. von Eran I 11 եւ Թ. 42, 27, 68 եւն:

գարձեալ կը գտնենք Տիգրանին մէկ զօրավարն¹ ալ, որ նոյն անունն ունէր: Ըստ ձայնական օրինաց ասկէ յառաջ եկած է Մերուժան, Մերհուժան ձեւը. այս անունը կը գտնենք Հայոց Արժրունի ըսուած նախարարական ընտանեաց մէջ: Ասոնց կալուածները Վասպուրականին մէջ էին. իրենց մայրաքաղաքն էր Ադամակերտ, Մեծ-Աղբակ գաւառին մէջ. ուրեմն ճիշդ այն երկրին մէջ, զոր Տիգրան Ատրպատականէն առած էր: Ուստի ինծի կ'երեւայ թէ բնական հետեւութիւն է՝ որ Արժրունիք Ծոփաց նուաճուած իշխաններէն յառաջ եկած ըլլան, որոնց Տիգրան թագաւորը նոր ստացած հիւսիսարեւելեան ատրպատական գաւառներուն մէջ երկիրներ շնորհեց:² Իսկ այս երկիրները՝ նոր-

¹ Պղուա. Ղուկ. 25: Ապպիան, Միհրդ. 84: Հմմտ. Untersuch. zur Gesch. von Eran I 68 եւն:

² Հեռեւեալ սահմանցոյցէն Ծոփաց թագաւորներուն Արժրունեաց հետ ունեցած կապակցութիւնն աւելի կ'իմացուի. 1. Ζαρίαδρις

2. Μιθροβουσανης, պատանդ առ Արիարաթայ կապագոյկացւոց թագաւորի, իր տէրութեան մէջ հաստատուած Դիոդ. 31, 22:

³ Αρ<ι>θ<ης>
Պոզիք. 31, 17.
Դիոդ. 31, 22.
Արեթէսոս Դրոդ.
յուջ. 35, 11:

3. Ἀράνης Սորաք. իս 14, 15 էջ 532:

Μιθροβουζάνης (Միթրոբուզան), Տիգրանին զօրավարը Պղուա. Ղուկ. 25: Ապպիան Միհրդ. 84, բղեալն նոր Շիրականի?

Մէրս-ժան Արժրունի ուրացեալ Փաւստ. Բիւզանդացի:

Շիրականի ըղեշխին ունեցած երկիրներուն — Մահկեր-տուն եւ Նիհորական — ճիշդ կը համեմատին եւ անոր համար հաւանական է որ Տիգրան՝ ըղեաշխ Նոր-Շիրականի պատիւն Արծրունեաց տուած ըլլայ: Թէպէտ Ազաթանգեղեայ էջ 596 (Langlois I 171) յիշած հրեշտակու թեան ցանկին մէջ՝ Արծրունեաց իշխանը վերջին տեղն ունի, սակայն այս մակարեութեան դէմ որոշիչ առարկութիւն չի կրնար ըլլալ: Վասն զի Արծրունեաց իշխանը հոս միայն իբրեւ իր աւատին ներկայացուցիչն է: Արծրունի անունը մեկնելու համար՝ զըոյցը կը պատմէ որ այս ցեղին նախնին՝ տղայ եղած ժամանակը՝ բաց տեղ մը պառկած կը քնանար, երբ արծիւ մ՝ եկաւ զանիկայ իւր թեւերովը ծածկեց: Սուտ-Մովսէս անգամ այս անունն իբրեւ արծիւ-ունիք¹ կը մեկնէ, վասն զի Արծրունիք Վաղարշակի² առջեւէն արծիւները կը տանէին (Բ. է.): Ստոյն Մովսէսի ըսածին համեմատ՝ Արծրունիք Արդամնողանէն սերած են. այսինքն՝ Սենեքերիմայ երկու որդւոցմէ մէկէն, որոնք իրենց հայրն սպաննելէն ետքը՝ Արարատայ երկիրը փախած էին:³ Արդամնողան այս երկրին հարաւ արեւե-

1 Մովսէսի ստուգարանութեան համաձայն՝ պէտք էր Արծր-ունիք՝ *Արծր-ունիքէն յառաջ եկած ըլլալ, ինչպէս որ Արշար-ունիք՝ *Արշար-ունիքէն (Արշար-տիւրէն). *Արծր-ունիք կ'ենթադէ դարձեալ *արծր-էր բայանուն մը՝ արծր-էն յառաջ եկած, ինչպէս որդ-էր հինգ. dipi.

2 Այսինքն՝ Տրդատայ, զոր Սուտ Մովս. Արշակ Փոքրին, այս է՝ Տիգրան Մեծին — առ Մար Արատայ — տեղը դրած է:

3 Մովս. Խոր. Ա, 23 ըստ Բ. Թագ. ԺԹ. 37. Եւս.

լեան կողմը բնակեցաւ, եւ Արծրունիք ու Գնունիք իրենց ծագումն անկէ յառաջ կը բերէին: Վերջէն Նախճաւանին շրջակայքը՝ Զուղայ, Վրնջունիք եւ Խրամ բնակեցան. ուստի այնպիսի տեղեր՝ որոնք ըստ Ստոյն-Մովսէսի՝ յառաջագոյն Տիգրան Ա. իր գերի բռնած Մարացը տուած էր:¹ Յամենայն դէպս Արծրունիներէն յառաջ կու գան Պարսկահայոց մէջ եղած Զարեհ-աւան գաւառին (Զարեհ-էն = Ζαριάδρις. հնոյ. Zari-wadri) եւ Վասպուրականի մէջ գտնուող Շաւարշան կամ Շաւարշական = Արտազ գաւառներուն անուններն ալ² (Ստ. Խոր. Բ. 117. էջ 111, ծք. էջ 130): Ստուգիւ կրնանք Թովմաս Արծրունիէն հետեւցընել (Ա. Ե. էջ 37. 38. Է. էջ 48. Ը. էջ 50) Թէ Շաւարշ եւ Շաւասպ անուններն Արծրունեաց տան մէջ կը գործածուէին: Քաջ Սկայորդին՝

Լէ, 38: Աղեքս. Բազմափէպ առ Եւսեր. Քրոն. Ա. 39. հրտ. Ա-՛՛իւր = I 27, 28 հրտ. Schöne. Հմմտ. ասոր նկատմամբ Գր. Խաւ-՛՛իւնց WZKM, VII 25. Նորոյր Բի-՛՛շանդ-ոյ՛ առ Ֆրիդր. Միւլլերի WZKM, VII 210/11:

¹ Թովմաս Արծրունի Ա. 4 առ Բր-՛՛իւր, Collection d'hist. armén. I 32/3: Թովմ. հոս ինքն իրեն դէմ կը խօսի, դնելով՝ որ Արծրունեաց (եւ Գնունեաց) նախնիքն Աժգահայ բնտանիքէն էին, զորոնք Տիգրան գերի բռներ ու Հայաստան բերեր է, մինչդեռ Ա. = էջ 8 Ստոյն Մովսէսի հետ համաձայնելով՝ Սենեքերիմայ որդիներէն յառաջ եկած կը գնէ:

² Զարեհ եւ Շաւարշ, լաւ եւս Շաւարշ (= աւ. Sjäwaršan, նորոյ. Sjäwaxš, Sjäwusš) այսինքն՝ Ζαριάδρις եւ Ξερόξης, Թագաւորք Ծովաց. Մար Արաս առ Սեր. հրտ. Պատկանեան էջ 6: Լաւ-՛՛իւնց, Coll. I 198a. Հմմտ. Մար-՛՛իւրի Untersuch. zur Gesch. von Eran I 39—42:

զՍանասար (ԿՄՆԾ) երկրին հարաւ-արեւմտեան կողմը բնակեցուց, Ասորեստանի սահմաններուն մօտերը: Իր սերունդը Սիմ լեռը լեցուց, «եւ զՇարաշան ի տանէ Սանասարայ հաստատէ ընելիս մեծ եւ կուսակալ յարեւմտից հարաւոյ, յեզեր սահմանացն Ասորեստանի, առ ամին Տիգրիս գետոյ, գաւառս պարգեւելով, զԱրձն, որ շուրջ զնովաւ եւ զԼեառն Տաւրոս, ուր եւ Սիմ, եւ զԿղեսուրն (χλειςσοῦρα) ամենայն:»¹

Այս մեկնութիւններէն ետքը՝ կարծեմ թէ չորս բղեաշխներուն ծագումը բաւական յայտնի է: Ծովք — որ նախ նուաճուեցաւ — եւ մասնաւորապէս Ծովք-Շահունի (= արքունի) գաւառն ի սկզբան Վապադովկիոյ վրայ յարձակելու դուռն էր, սակայն տկար տէրութենէն վախնալու բան չկար: Եւ իրօք ալ Տիգրանին բանակներն երեք անգամ դիւրաւ տիրեցին Գամրաց: Ընդ հակառակն անշուշտ Տիգրանին բաղձալի էր անհանդարտ Սելեւկեանց դէմ — որ իրենց ներքին տկարութեամբն հանդերձ՝ իրենց նախկին ամբարտաւանութիւնը պահած էին — սահմանապահ ամրութիւն մ'ունենալ. եւ նոյն իսկ Սելեւկեանք իրենց տէրութիւնը կորսնցընելէն ետքն ալ՝ մնացին ոյժ մը, ուստի եւ անկարելի եղաւ Արամայեցիները Հայոց հետ ձուլել: Այսպիսով ելաւ Ասորոց դէմ մարզը կամ սահմանը: Բայց Ծովաց անկախութեան բաղձանքն ալ դեռ մարած չէր, եւ Ղուկին

¹ Մովս. Խոր. Բ. Է. էջ 80 հմմտ. Ա. Է. էջ 48:

արշաւանաց ժամանակը՝ ասոնց հպատակութեան վրայ կարելի չէր վստահութիւն ունենալ, ինչպէս իրօք ալ յաղթողին կողմն անցան (Պղոստ. Ղուկ. 24, 29): Ստոյգ է որ վերջէն ժառանգական ցեղ մը հոս չենք տեսներ, եւ Պոմպէոսի Տիգրանին հետ խաղաղութեան դաշինք կուելէն ետքն ալ՝ Ծոփք եւ Կորդուխք Տիգրանայ որդւոյն՝ Տիգր. Կրտսերին թագաւորութիւնը ճանչցան, բայց որովհետեւ Տիգրան Կրտսեր հօրը հետ գժտեցաւ եւ Պարթեւաց հետ յարաբերութեան մէջ մտաւ՝ այս նահանգները Կապադովկիոյ Արիոբարզանէս թագաւորին տրուեցան:¹ 54ին (Ք. ե.) Սոյեմոս՝ Եմեսացի իշխանական ցեղէն՝ Ծոփաց տէրութիւնն ընդունեցաւ:² Զարիազրէսին գահէն զրկեալ յաջորդները՝ ինչպէս տեսանք, Ատրպատականի կողմերը նոր առնուած գաւառներուն մէջ այլեւայլ երկիրներ ընդունեցան. սակայն կարելի է որ ասոնց մէկ ճիւղը Մեծ Ծոփաց իշխանութիւնը պահած ըլլայ: Գոնէ Գ. դարուն անոնց մէջ կը գտնենք Զարեհ³ անունը: Ծոփք Շահունի ալ վերջէն առանձին աւատային իշխանութիւն մը կազմեց: Արձնի բղեշխութիւնը գլխաւորաբար նոր ձեռք բերուած Միջագետքէն կազմուեցաւ Մծբին մայրաքաղքով, բայց իր գլխաւոր մասը միշտ մնաց Արձն գաւառը՝

¹ Պղոստ. Պոմպ. 33: Ապպիան Միհրդ. 105 Կաս. Գիոն. 36, 53:

² Տակ. Տարեգր. 13,7. պատմ. 2,81.5,1. Հմմտ. Mommsen, RG. V 383.

³ Փաւստ. Բիւզ. Գ. 11. էջ 29:

համանուն քաղքով, այս օրւան Արզէն-սուի վրայ: Աղձնեաց բղեշխին տրուեցաւ թագաւորութիւնն ալ, այս ինքն՝ ետքէն Կորճայք ըսուած հայկական նահանգը՝ Ծաւղեայք, Կորդուք, Կորդուիք եւ Տմորիք գաւառներով, ինչպէս նաեւ Մոկք նահանգը: «Սահմանակալ ի կողմանէն Արուաստանի», տիտղոսէն կրնանք հետեւցընել, թէ բղեաշխին գլխաւոր գործերէն մէկը՝ անհաւատարիմ Արուայիկներուն վրայ հսկելն էր: Ղուկուղղոսին արշաւանաց ժամանակը թագաւորին Գուրաս եղբայրը Մծբնայ հրամանատարն էր (Պղոտ. Ղուկ. 32): Ատրպատականի նուաճուած գաւառներէն՝ Նոր Շիրակայ սահմանը կազմուեցաւ եւ զայն Ծոփաց թագաւորական տանը տրուեցաւ մեծամեծ կալուածներով, գուցէ նաեւ բզեաշխ պատիւն ալ:¹ Նոյնպէս Արացիներէն ետ առնուած Գուգարքը սահման եղաւ:

Այս տիտղոսը Գուգարքէն յետոյ Ալանաց ալ անցաւ, որոնց *Ἰταξίης* անուամբ իշխանը

1 Ինծի կ'երեւայ թէ Արծրունիները վերջէն ուրիշ տոհմէ մը նսեմացան: Ըստ Ստոյն Մովսէսի՝ Արծրունիները Աղաղարշակայ ժամանակը՝ արծուէնչան դրօշին դրօշակիրն էին, բայց Գ. գարուն (Ք. ե.) Մամիկոնեանք՝ Հոյաստանի ժառանգական սպարապետներն առին — աշոտէնչան + վերագիրը (Փաւստ. Բիւզ. Ե. 7. 37: Untersuch. zur Gesch. von Eran I 47) — որոնց համեմատութեամբ բաւական ուշ Հոյաստան գաղթելը՝ նոյն ատենները լաւ ծանօթ էր Փաւստ. Բիւզ. Գ. Բ. էջ 68 (Untersuch. zur Gesch. v. Eran II 82): Ասիկ կը մակարեքուի թէ *Μεθροβουζάρης* եւ իւր ցեղը՝ Արծրունիք Հոյոց պետութեան սպարապետներն էին, մինչեւ որ ճենաստանէն գաղթած Մամիկոնեանք անոնց տեղը գրաւեցին:

716ին կը գտնենք Թէոփանէսի Ժամանակագրութեան մէջ. էջ 392, 27:

Անուանց ձեւերուն նկատմամբ հմմտ շէ-բընի շայ. քեր. Ա. Կ. 119 եւն, նմանապէս իմ Ասորականքս կտեսիասի 618 Թ. 401, ուր Πατιξείδησι (Գիոնիսիոս Միղետացի Πατιξούδησι այս ինքն՝ Πατιξούδησι = *patixšája(h)-wiða* = *μελεθωνός οικίων*) եւ պահլ. *pātxšāhi* (պատմական գրութիւն *pāšāhi* տեղ՝ **patxšāh*, **patšāh*, **paššāh*, *pāšāh* ձեւերէն) հետ ըրած բաղդատութիւնս ջնջելի է:

Հնագոյն ձեւերն են յուն. Πιτιάξης եւ վրացերէն *pitiaxši*, *patiašxi*. Ամիանու քով տեսնուած *Vitaxa* ձեւը յունական յետնադարեան արտաբերութիւնն է *βιτιάξης* = շայ քեր-ըն, շեսիքիոսի քով կը հանդիպինք *βιτιάξ* (կարգա՛ *βιτιάξ*) ձեւին, ինչպէս նաեւ ասոր հակառակ 27, 10, 3 *Vidichabius* (այսպէս ձեռագրին մէջ) նոյնպէս 30, 7, 7 *Vithigabius*, այս է՝ յուն. *Θιδιγαβίος* = *Widigawja*, *Widigōja*. Վրացերէն *patiašxi* ձեւը հնպ. **pati-axši* կամ **pati-axša* հնագոյն ձեւ մը մատնանիշ կ'ընէ՝ *paiti-axši* յաւելուածոյ գրով. ասոր երկրորդ տարրը՝ *Αξιδάρης* (այսպէս Արիան Պարթ. հօկտոր. 16 առ Կ. Միւլլէրի FHG. III. 589. Գիոն կասիոսի՝ կոստանդեան քաղուածոյից մէջ 68, 16, 3 *Ἐξηδάρης*, *η* տառն ՝ արտասանելով) շայ. Աշխարհը՝ անուան մէջ դարձեալ յերեւան կ'ելէ: *Αξιδάρης*՝ Պարթեւաց Բաղուր Բ. թագաւորին որդին՝ շայոց թագաւոր

էր, զոր Խոսրով՝ իւր մօրեղբայրը վար առաւ եւ տեղն իւր Պարթամասիր եղբայրը դրաւ (113 ֆ. Ե), բայց կ'երեւայ թէ Ադրիանոս զինքը դարձեալ թագաւոր դրաւ, երբ Տրայիանոսին առած նահանգները՝ Ասորեստան, Միջագետք եւ Հայաստան Պարթեւաց ձեռքը թող տուաւ¹: Աշխարհը անուամբ Գիմարսեան մը կը յիշուի Հայոց թագաւորութեան բաժանման ժամանակը (Խոր. Գ. Խ՜ 45): Ընդհակառակն Տրդատ թագաւորին աներոջ անունն ալ Աշխարհ է (Խոր. Բ. 34. էջ 165). Մովսէս այս անունը յայտնապէս Տրդատայ Աշխէն կնոջ անունէն հետեւցուցեր է, զոր Ագաթանգեղ, էջ 575 եւն առանձին կը յիշէ, վասն զի Խոր. յիշեալ անունն իրրեւ լինով եղած համառօտութիւն մը նկատեր է²: Սակայն անշուշտ շատ ուղիղ է Հիւրշմանի՝ (Հայ. Քեր. Ա. ա, 20) Աշխէն ոսեա. *axsin* «տիկին, կամ» «տիրուհի», բառին հետ ըրած համեմատութիւնը:

Բրտշխ տիտղոսին հին ժամանակներէ մնացած երեք մեկնութիւններէն մէկը՝ այսինքն՝ Ամիանոսինը (*magister equitum*) բոլորովին խեղաթիւր է: Կոստանդիանոս Մեծ ամբողջ պետութեան՝ կամ պետութեան գոյութիւն ունեցող բաժանմանը համեմատ երկու զորավար դրած էր, մէկը հետեւակազօրուն (*magister peditum*), իսկ միւսը՝ այրուձիոյն վրայ (*magister*

¹ Հմմտ. Գառնի, *Gesch. Irans* էջ 141. 145:

² Հմմտ. ասոր նկատմամբ՝ Մարկարաի *Fundamente israelitischer und jüdischer Gesch.* p. 52 եւն:

equitum), որոնք երկուքն ալ ուղղակի հասարակ զօրքին, իսկ անուղղակի՝ իրենց ստորակարգեալ վաշտապետներուն (Duces) ձեռքովը նաեւ սահմանապահ զօրքին գլուխն էին¹: Ուստի magister equitumը մանաւանդ Հայոց սպային կը համապատասխանէ: Զաքարիա Մետիլենացւոյն մեկնութիւնը՝ իբրեւ «ὄπαρχος (տեղապահ) [Թագաւորին, կամ փոխարքայ]², ընդհանրապէս պաշտօնին էութիւնը կը բացատրէ, մինչդեռ յուն. Ագաթանգեղեայ մէջ κομιτατήσιος = լատ. comitatensis, comitatusի՝ «արքունեաց վերաբերող» [Թարգմանութիւնը (Sophocles Greek Lexicon s. v.) պարզապէս անկէ յառաջ եկած է, որ 4 բրէտլի+ Թագաւորական պալատան մէջ առաջին բարձնունէին:

¹ Տես Մ. Բ. Բ. Աբրիս, Abriss des röm. Staatsrechts 360.

² Լ. Բ. Բ. Անեք. Syr. III 259, 25: [Զաքարեայ հռոմէոսի անուանեալ եկեղեցական պատմութիւնը, գերմ. Թարգմ. հրատ. Կ. Արէնի եւ Գ. Կրիւզերի էջ 173, 22:]



Ա Ջ Գ Ը Յ Ի Ն Մ Ը Տ Ե Ն Ը Գ Ը Բ Ը Ն

- Ա. Գալէմբեարեան Հ. Գրիգորիս Վ., Ուսումնասիրութիւնք Լեհահայոց դատաստանագրոյն : 1. Պիշոֆ, Լեհահայոց հին իրաւունքը : 2. Գոչեք. իրաւունք Հայոց : 1890 : 8° Երես՝ 85+59 : Փր. 1.25
- Բ. Մեմեկիշեան Հ. Գաբրիէլ, Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիւզեանց. (պատկերազարդ :) 1890 : 8° Երես՝ 50 : Փր. 1.—
- Գ. Տաշեան Հ. Յակոբրոս, Ազաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ազաթանգեղեայ գրոց : 1891 : 8° Երես՝ ԺԱ+159 : Փր. 1.25
- Դ. Դեմետրիոս Տաւի Երեւելեան Հայր ի Պուրովինա : Թրգմ. Հ. Գ. Վ. Գալէմբեարեան : 1891 : 8° Երես՝ 79 : Փր. —.85
- Ե. Տաշեան Հ. Յակոբրոս Վ., Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիստենեայ վարուց Աղեքսանդրի : 1892 : 8° Երես՝ Դ+272 : Փր. 3.—
- Զ. Աչպեք Տըվլէ եւ Գ. Փիսոն, Ուղեւորութիւն ի Փոքր Ասիա : Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան : 1892 : 8° Երես՝ 82 : Փր. 1.—
- Ը. Մառ Նիկ., Ամսոնային ուղեւորութիւնից դէպ ի Հայս : Թրգմ. Մսոփրիոս Ասոփեան : 1892 : 8° Երես՝ 89 : Փր. 1.25
- Թ. Գարիէք Ա., Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացոյ : Հտ. Ա. : Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան : 1893 : 8° Երես՝ Ժ+51 : Փր. 1

- Թ. Գաշեւիքեան չ. Գրիգորիս Վ., Պատմութիւն հայ տարրութեան: Հտր. Ա. 1794—1860: (1 լուսանկարով:) 1893: 8° Երես՝ 232: Ֆր. 2.50
- Ժ. Կոնիքիք Փր. Կ., Բնութիւնը գրոց Դաւթի Անյաղթի: Թրգմ. եւ յաւ. չ. Յ. Վ. Տաշեան: 1893: 8° Երես՝ Է+92: Ֆր. 1.25
- ԺԱ. Գոյրիկեան չ. Գրիգոր Վ., Հայք յՆդիսաքեթուպոլիս Դրամսիրուանիոյ 1680—1779: (1 գրնկատիւ.) 1893: 8° Երես՝ Ժ+533: Ֆր. 4.50
- ԺԲ. Խաչաթեան Գր., Զննոր Գլակ, համեմատական ուսումնասիրութիւն: 1893: 8° Երես՝ 78: Ֆր. 1.—
- ԺԳ. Տէր-Մովսիսեան Փարսադան, Հայ գիւղական տունը: Թրգմ. չ. Բ. Վ. Պիլէգիկճեան: (6 տախտակ՝ 55 պատկ.): 1894: 8° Երես՝ 103: Ֆր. 2.—
- ԺԴ. Գարիկեան Ա., Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացոյ. Հտր. Բ. կամ Եւելուած: Թրգմ. չ. Յ. Վ. Տաշեան: 1894: 8° Երես՝ ԺԱ+43: Ֆր. 1.—
- ԺԵ. Տաշեան չ. Յ. Վ., Ուսումնասիրութիւնը հայերէն փոխառեալ բառից: Ա.՝ չ. Հիւլալման, Սեմական փոխառեալ բառեր հին հայերէնի մէջ: Բ.՝ Փրոքէլման Կ., Յունական փոխառեալ բառեր հայերէնի մէջ: Գ.՝ չ. Հիւլալման, Հայկական Եւրոպական անուններ: 1894: 8° Երես՝ 9+145: Ֆր. 2.—
- ԺԶ. Տաշեան չ. Եսկոյրեան Վ., Մատենագրական մանր ուսումնասիրութիւնը: Հտր. Ա.: Ա—Զ: Ա. Նեմսիոս: Բ. Պրոկղ Դիադոխոս: Գ. Խոսրովիկ: Դ. Գիրք Հերձուածոց կամ Եպիփան: Ե. Պրոկղ: Զ. Սեկունդոս իմաստասէր: 1895: 8° Երես՝ ԺԲ+294: Ֆր. 3.60
- ԺԷ. Տաշեան չ. Եսկոյրեան Վ., Հայկական աշխատսիրութիւնը հայագէտ Պ. Փէթթէրի, ի մի ամփոփուած եւ թարգմանուած հանդերձ ծանօթութեամբ: 1895: 8° Երես՝ 202: Ֆր. 2.50
- ԺԸ. Տիւրեան Կ., Սեւ ծովու ուսական եզերքը: 1895: 8° Երես՝ 192: Ֆր. 2.—
- ԺԹ. Գոյրիկեան չ. Գրիգոր Վ., Դրամսիրուանիոյ Հայոց Մետրապոլիսը կամ Նկարագիր Կերլա

- Հայաքաղաքի ի գիր եւ ի պատկերս: 1896: 8^o
Երես՝ Թ+352: Ֆր. 3.60
- Խ. Տաշեան Հ. Յակովբոս Վ., «Վարդապետու-
թիւն առաքելոց» անվաներական կանոնաց մա-
տեսանք. Թուղթ Յակոբայ առ Կողբատոս եւ Կանոնք
Թադդէի: 1896: 8^o Երես՝ Թ+442: Ֆր. 6.—
- ԽԱ. Տոմաշեկ Վ., Սասուն եւ Տիգրիսի աղբերաց
սահմանները: Պատմական եւ տեղագրական հե-
տազօտութիւն: Մասն Առաջին՝ Պատմական տե-
ղեկութիւնը Սասնոյ վրայ: Թրգմ. Հ. Բ. Պիլէգիկ-
ճեան: 1896: 8^o Երես՝ Է+62: Ֆր. 1.—
- ԽԲ. Կարրիէր Ա., Արգարու գրոյցը Մոզէս Խորե-
նացոյ Պատմութեան մէջ: Թրգմ. Հ. Գարբիէլ Վ.
Մէնէվիշեան: 1897. 8^o էջ ԺԶ+107: Ֆր. 1.50
- ԽԳ. Յովնանեան Հ. Ղ., Հետազօտութիւնը նախ-
նեաց ռամկօրէնի վրայ: Ուսումնասիրութիւնը եւ
քաղուածներ: Մասն Ա. Ռամկօրէն մատենագրու-
թիւնը: Տետր Ա: 1897, 8^o էջ Ը+272: Ֆր. 4.—
- ԽԴ. Յովնանեան Հ. Ղ., Հետազօտութիւնը նախնեաց
ռամկօրէնի եւն: Տետր Բ: 1897: 8^o էջ Ա—Ը+
273—522: Ֆր. 3.—
- ԽԵ. Գեղցեք Հ., Համառօտ պատմութիւն Հայոց: Թրգմ.
Հ. Գր. Վ. Գալէմբեարեան: Յաւելուածք թար-
գմանչին՝ 1. Յանկ 1895—1897 Հայոց կոտորած-
ներու առթիւ լոյս տեսած գրքերու: 2. Գաւազա-
նագիրք Կաթողիկոսաց եւ Պատրիարքաց Հայոց:
1897 8^o էջ Ը+130: Ֆր. 1.50
- ԽԶ. Մեմեմիշեան Հ. Գարրիէր Վ., Գիրք (կամ
յօդուած) գրելու արուեստը: Նորուս հեղինակնե-
րուն ուղղեալ քանի մը կարեւոր ակնարկութիւն-
ներ: Յաւելուած՝ Գիրք կարգալու արուեստը:
1898: 8^o էջ Է+123: Ֆր. 1.25
- ԽԷ. Խաչաթեան Գ. Բ., Մ. Խորենացու նորագոյն
աղբիւրների մասին քննադատական ուսումնա-
սիրութիւնը: 1898: 8^o, 56 էջ: Ֆր. 1.—
- ԽԸ. Տաշեան Հ. Յ., Ակնարկ մը հայ հնագրու-
թեան վրայ: Ուսումնասիրութիւն Հայոց գրչու-

Թեան արուեստին: (10 զնկատիւ պատկերով:)
1898: 8° ԺԱ+202 էջ: Ֆր. 2.50

ԻԹ. Դադրաչեան Ե., Փաւստոս Բիւզանդացի եւ
իւր պատմութեան խարդախողը: Մ. Խորենացու
աղբիւրների ուսումնասիրութիւն: 1898, 8° 175 էջ:
Ֆր. 2.50

Լ. Մսերեանց Լ., Հայերէն բարբառախօսութիւն:
Թրգմ. ի ուսերէնէ Հ. Գ. Վ. Մէնէփիշեան: 1899,
8° Երես՝ Է+26: Ֆր. —.50

ԼԱ. Ըօսեան Հ. Ե., Հայր ի Զմիւռնիա եւ ի շրջա-
կայս: Հատոր Ա. Զմիւռնիա եւ Հայր. (պատկե-
րազարդ:) 1899: 8° Երես՝ ԺԲ+369: Ֆր. 5.—

ԼԲ. Ըօսեան Հ. Ե., Հայր ի Զմիւռնիա եւ ի շրջա-
կայս: Հատոր Բ. Զմիւռնիոյ վիճակին զխաւոր
քաղաքներն եւ Հայր. (պատկերազարդ:) 1899:
8° Երես՝ Ժ+161: Ֆր. 2.50

ԼԳ. Գովրիկեան Հ. Գրիգոր Վ., Հայր յԵղիսարե-
թուալիս Դրամսիրուանիոյ. Բ. Հատոր 1780—1825.
(1 զնկատիւ:) 1899: 8°. Երես՝ Է+558: Ֆր. 5.—

ԼԴ. Գագանձեան Ե., Եւզոկիոյ Հայոց զաւատաբար-
քաղ: 1899: 8° Երես՝ Է+124: Ֆր. 1.—

ԼԵ. Կարրիէր Ա., Հեթանոս Հայաստանի ութ մեհեան-
ներն Ազաթանգեղոսի եւ Մ. Խորենացոյ համե-
մատ: Թրգմ. Հ. Յակովբոս Վ. Տաշեան: (1 աշխար-
հգրկն տախտակով:) 1899: 8° Երես՝ 48: Ֆր. —.70

ԼԶ. Տաշեան Հ. Ե., Ժողովածոյք առակաց Վարդանայ,
ըստ Ն. Մատի, տեղեկատուութիւն եւ քաղուածք-
ներ: 1900: 8° Երես՝ ԺԱ+198: Ֆր. 2.50

ԼԷ. Տաշեան Հ. Ե., Մատենագրական Մանր Ուսում-
նասիրութիւնք. (տես ԺԶ:) Մասն Բ: Է-Ժ. Խիկար
եւ իւր իմաստութիւնն, Ազապետոս եւ իւր Յոր-
դորականք առ Յուստինիանոս, Թղթակցութիւն
Արգարու եւ Զրիստոսի ըստ նորագիւտ արձանա-
գրութեան Եփեսոսի, եւ Գէորգայ Պիսիդեայ Վեց-
օրեայք: 1901: 8° Երես՝ ԺԲ+388: Ֆր. 4.50

ԼԸ. Գր. Տէր-Պօղոսեան, Նկատողութիւններ Փաւս-
տոսի Պատմութեան վերաբերեալ: 1901: 8° Երես
Ը+110: Ֆր. 1.50

- ԼԹ. Վեբեր Դր. Սիմոն, Արարատը Ս. Գրոց մէջ:
Թրգմ. Հ. Բառնաբաս վ. Պիլէզիկճեան: 1901: 8^o
Երես՝ Ե+77: Փր. 1.—
- Խ. Սանտաչճեան Յովսէփ վ., Ասորեստանեայ
եւ Պարսիկ սեպագիր արձանագրութիւնք կամ
նոցին քաղուածք որոնք Նաիրի-Ուրարտու աշխար-
հին պատմութեան կը վերաբերին: 1901: 8^o
Երես՝ 262: Փր. 4.50
- ԽԱ. Խաչաթեանց Բագրատ, Հայ ժողովրդական
դիւցազնական վէպը: 1903: 8^o Երես՝ Ը+72: Փր. 1.—
- ԽԲ. Մեռեվիչեան Հ. Գաբրիէլ վ., Արդի լեզուա-
գիտութիւնը: Հատոր Ա.: 1903: 8^o Երես՝ Ը+204:
Փր. 3.—
- ԽԳ. Մարկարտ Դր. Յ., Հայ Բդեաշխք: Թրգմ. Հ.
Թ. Կէտիկեան: 1903: 8^o Երես 44:
Փր. —.75



